ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 922 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-Ի N Մ-640-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 4-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-640-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 8-րդ կետում «2024 թվականի դեկտեմբերի 31» բառերը փոխարինել «2025 թվականի հունիսի 30» բառերով.

2) 9-րդ կետի վերջին պարբերությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ՝

«Կատարվելիք շինաշխատանքների գումարը կազմում է 3,523,794,000 դրամ՝ ներառյալ չնախատեսված ծախսերը 50,000,000 դրամ, իսկ 600,000,000 դրամ գումարի չափով նախատեսվում է նյութերի և սարքավորումների ներմուծում: Ընդհանուր աշխատանքների գումարից (որը կազմում է 3,523,794,000 դրամ) 1,719,222,310 դրամ

գումարի չափով շինաշխատանքները կատարվում են Հորիզոն 95 ՍՊԸ-ի հետ կնքված՝ 10Շ/017 պայմանագրի հիման վրա: Հորիզոն 95-ի կատարած փաստացի աշխատանքի գումարը ըստ 21.05.2024 թվականի ներկայացված կատարողական ակտի կազմում է 1,533,797,560 դրամ:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

27.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ